ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

26.05.2021թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ա ն ա ն՝

1. Տեղեկատվության տրամադրում նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման մասին:

ա/ Նախապատրաստել համապատասխան գրություն՝ Վանաձոր համայնքի ղեկավարին և ՀՀ ոստիկանություն՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ Անուշ Ասլանյանի կողմից բարձրացված թեմայի մասին, առաջարկելով վերականգնել Վանաձորի Տիգրան Մեծ պողոտայի «Տաշիր-պիցցա» խանութի դիմացի փողոցի հետիոտնային անցումը և այն նշագծել, քանի որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարողանում փողոցն անվտանգ հատել, մինչդեռ ստորգետնյա անցումը մատչելի չէ, իսկ մյուս անցումները բավականին հեռու են գտնվում:

բ/ Առաջարկվեց հետևողական լինել Վանաձորի համայնքապետարանի կողմից քանդված Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի թեքահարթակի վերականգնման հարցում: Պաշտոնական գրությամբ նախազգուշացնել Վանաձոր համայնքի ղեկավարին, որ քանդված թեքահարթակի մետաղական կոնստրուկցիաները օգտագործել բացառապես թեքահարթակ կառուցելու նպատակով՝ ՀՀ Լոռու մարզպետարանի հետ համապատասխան լուծում գտնելուց հետո:

գ/ Քննարկել Վանաձորի թիվ 7 դպրոցի հարակից վերգետնյա անցման ներառական կիրառության նպատակով նախատեսված վերելակի չտեղադրելու հարցը և ներկայացնել առաջարկություն:

դ/ Առաջիկա շինարարական աշխատանքներում նախատեսել Վանաձորի Երևանյան խճուղուն հարակից տարածքում գտնվող կույրերի նախկին ուսումնարտադրական ձեռնարկությունից մինչև Նաիրի թիվ 1 շենքը փողոցի մայթի հատվածը՝ փողոցից բազրիքային անջատումով, ասֆալտապատելը: Հնարավոր ժամկետների մասին ներկայացնել առաջարկություն:

/Զեկ.՝ Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Դավիթ Մանուչարյան/

Աջակցել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում Զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց բժշկա-վերականգնողական իրականացվելիք աշխատանքներին:

/Զեկ.՝ Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ռուզաննա Պողոսյան/

2. «Մոլորակ» մշակութային լրատվական բարեգործական ՀԿ-ի հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների մասնակցությամբ «Միասին դեպի ապագա» թեմատիկ տեսահոլովակի շնորհանդեսը:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան, Հանձնաժողովի անդամ «Մոլորակ» մշակութային լրատվական բարեգործական ՀԿ նախագահ, երգահան Սուսաննա Ապրեսյան/

3. Անկախ կյանքի կենտրոնների ստեղծում, զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառմանն ուղղված միջոցառումների ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Տաթևիկ Ստեփանյան/

4. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մասին:

/Զեկ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետ Աննա Հակոբյան/

5. «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից իրականացված ՀՀ տեղամասային կենտրոնների մատչելիության մշտադիտարկման մասին. Պատկերը ՀՀ Լոռու մարզում:

/Զեկ.՝ «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի նախագահ Կարինե Գրիգորյան, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ Անուշ Ասլանյան/

6. Հայաստանում Կանանց Ռեսուրսների Հիմնադրամի ֆինանսավորմամբ «Լուսաստղ» ԲՀԿ-ի կողմից 2021թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում իրականացվող «Վերարտադրողական առողջությունը՝ բարեկեցության գրավական» ծրագրի մասին:

/Զեկ.՝ «Լուսատղ» բարեգործական ՀԿ նախագահ Անի Գաբրիելյան/

7. Պետական ծրագրերի ընթացքի մասին.
   - «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի մասին:

     /Զեկ.՝ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Ծրագրի Վանաձորի համակարգող Հասմիկ Հովսեփյան/
   - «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն Ստեփանավանի ցերեկային կենտրոնում» և «Կառուցելով ապագան սեփական ձեռքերով» ծրագրերի մասին»:

     /Զեկ.՝ «Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Սուրեն Մաղաքյան, «Լիարժեք կյանք» ՀԿ Ստեփանավանի կենտրոնի համակարգող Անժելա Հովսեփյան /
   - «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից իրականացվող «ՀՀ Լոռու մարզում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում» ծրագրի մասին:

     /Զեկ.՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի Վանաձորի համայնքային կենտրոնի տնօրեն Սուսաննա Մարտիրոսյան/
   - «Յունիսեֆ Հայաստան», ՀՀ ԿԳՄՍՆ և ՀՀ ԱՍՀՆ համատեղ՝ «Սպիտակի տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոն՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն» ծրագրի մասին:

     /Զեկ.՝ Սպիտակի տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն Արտակ Պողոսյան/
   - «Առավոտ» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրի մասին:

     /Զեկ.՝ «Առավոտ» ԲՀԿ նախագահ Մարգարիտա Շահվերդյան/

8. Հայտարարություն
   - «Դեպի անկախ կյանք» ծրագրի շրջանակներում "EREO" նորաստեղծ անկախ կյանքի ռեսուրս կենտրոնի մասին **/«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպության նախագահ Անուշ Ասլանյան/**

9. Այլ հարցեր:

Ա ր ձ ա ն ա գ ր վ ե ց՝

1. Օրակարգի 1-ին կետի վերաբերյալ նիստին մասնակից Վանաձորի քաղաքապետարանի ճարտարապետական բաժնի պետի տեղակալ Արմեն Ալավերդյանը հայտնեց, որ՝

ա/ Համայնքային բյուջեի միջոցները բաշխվում են սուբվենցիոն ծրագրերի իրականացման ենթատեքստում, առաջիկայում գնումների գործընթացից հետո հնարավոր աշխատանքներ կտարվեն գետնացումը մատչելի դարձնելու համար: Առաջարկվեց մինչև համարժեք լուծում գտնելը՝ գետնանցումը մատչելի դարձնելը սակավաշարժ անձանց համար նշված հատվածում վերականգնել հետիոտնային անցումը:

բ/ Վանաձորի համայնքապետարանի կողմից քանդված Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի թեքահարթակի վերականգնման հարցի վերաբերյալ դարձյալ պատճառ բերվեց շենքի պատմաճարտարապետական հուշարձան լինելը, բացառելով դիմային հատվածից թեքահարթակի գոյությունը: Առաջարկը դարձյալ նույնն էր՝ շենքի արևելյան և արևմտյան մուտքերից հարմարեցված մուտքերի գոյությունն էր: Քանի որ հարցի նման լուծումը չի բավարարում հաշմանդամություն ունեցող անձանց, ապա առաջարկվեց համագործակցել հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ («Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ, «Լուսատող» բարեգործական ՀԿ) և այդ մասին 15-օրյա ժամկետում ներկայացնել երկուստեք լուծելի առաջարկ:

գ/ Վանաձորի թիվ 7 դպրոցի հարակից վերգետնյա անցման ներառական կիրառության նպատակով վերելակի կառուցումը պետք է նախաձեռնվի ՀՀ կառավարության կողմից, իսկ համայնքի կհամաֆինանսավորի այդ ծրագիրը:

դ/ Վանաձորի Երևանյան խճուղուն հարակից տարածքում գտնվող կույրերի նախկին ուսումնարտադրական ձեռնարկությունից մինչև Նաիրի թիվ 1 շենքը փողոցի մայթի հատվածի՝ փողոցը բազրիքային հատվածով անջատման հարցը քննարկելի է առաջիկայում գնումների գործընթացից հետո:

2. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վահագն Մկրտչյանը հանգամանալից տեղեկատվություն տվեց Զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց ԲԿ-ում իրականացվող բժշկա-վերականգնողական իրականացվելիք աշխատանքների մասին: Ընթացքի մեջ է բաժանմունքի տեխնիկական հագեցվածությունը, այն առաջիկայում ավելի կհարստացվի:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրեց հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, սոցիալական ներառմանն ու անկախ կյանքի կենտրոնների ստեղծմանն ուղղված ԱՍՀՆ ծրագրերը՝ կարևորելով դրանց համակարգված ու համալիր իրականացումը: Ապա անդրադարձավ Անկախ կյանքի կենտրոններում հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար և ոչ միայն նախատեսվում է իրականացնել ինքնուրույն կենցաղավարման ծրագրերին, մասնագիտական կողմնորոշման, կարիերայի պլանավորման ծառայություններին: Տեղեկացվեց, որ մատուցվող սոցիալական ծառայությունների շրջանակում կիրականացվեն նաև շահառուի կարիքների գնահատում, անձնական օգնականի տրամադրում:

Ապա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետ Աննա Հակոբյանը անդրադարձավ աջակցող միջոցների տրամադրման պարզեցված ընթացակարգին՝ նշեց, որ այն հնարավորություն կտա կարիքին համապատասխան ծառայությունները տրամադրել առավել հասցեական և ժամանակին:

4. «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ Անուշ Ասլանյան ներկայացրեց «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից իրականացված ՀՀ Լոռու մարզի տեղամասային կենտրոնների մատչելիության մշտադիտարկման տվյալները, իսկ ՀՀ Լոռու մարզի թվով 4 ՏՏՀ-ների վերլուծական համառոտագրությունը Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանը տրամադրեց ՏՏՀ-ների ներկայացուցիչներին:

5. «Լուսատղ» բարեգործական ՀԿ նախագահ Անի Գաբրիելյանը ներկայացրեց Հայաստանում Կանանց Ռեսուրսների Հիմնադրամի ֆինանսավորմամբ ԲՀԿ-ի կողմից 2021թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում իրականացվող «Վերարտադրողական առողջությունը՝ բարեկեցության գրավական» ծրագրային աշխատանքները: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հայաստանում Կանանց Ռեսուրսների Հիմնադրամի ներկայացուցիչներ Սիրան Հովհաննիսյանը և Արմինե Մարկոսյանը:

6. Նիստի ընթացքում ներկայացվեց պետական ծրագրային աշխատանքների ընթացքը:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Գրություն նախապատրաստել Վանաձոր համայնքի ղեկավարին, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Լուսատղ» բարեգործական ՀԿ-ներին՝ Վանաձորի համայնքապետարանի կողմից քանդված Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի մոտ թեքահարթակի վերականգնման հարցի վերաբերյալ, առաջարկելով երկշաբաթյա ժամկետում ներկայացնել երկուստեք լուծելի առաջարկ:

բ/ Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետարանի կայք-էջում տեղադրելու համար:

2. Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աննա Գասպարյանին՝

Ապահովել աշխատանքների հրապարակայնությունը:

3. «Լիարժեք կյանք» ՀԿ-ին՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել տեղեկատվություն «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Անկախ կյանքի կենտրոնի մասին:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Գ.ԱՍՐՅԱՆ

Կազմեց՝ Վ.Ջաղինյանը /2-33-99/